

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև բարձրագույն կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լիբանանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության մասին 1997 թվականի հոկտեմբերի 20-ի՝ Երևանում ստորագրված Պայմանագրի հիմնադրույթները,

առաջնորդվելով երկու երկրների ժողովուրդների միջև գոյություն ունեցող ավանդական բարեկամական առանձնահատուկ հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման ցանկությամբ,

ձգտելով զարգացնել և խորացնել համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրին, ինչպես նաև իրենց երկրների ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, կնպաստեն երկու երկրների միջև բարձրագույն կրթության և գիտության բնագավառում համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն երկու երկրների բարձրագույն կրթական և գիտահետազոտական հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը՝ այդ հաստատությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն գիտնականների, դասախոսների և ուսանողների փոխայցելությունները՝ իրենց գիտական և ուսումնական հաստատությունների փորձն ու նվաճումները միմյանց ծանոթացնելու նպատակով:

Հոդված 4

Գիտական համագործակցության զարգացման և ընդլայնման նպատակով Պայմանավորվող կողմերը կոյուրացնեն հետազոտական ծրագրերի և նախագծերի համատեղ մշակումն ու իրագործումը, դրանց արդյունքների, գիտական և ուսումնական տեղեկատվության փոխանակումը:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կրթաթոշակներ կտրամադրեն իրենց երկրների բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններում ուսումնառության և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը բանակցություններ կվարեն իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան շնորհված գիտական աստիճանները և ակադեմիական կոչումները փոխադարձ հավասարազոր ճանաչելու հարցերի շուրջ և այդ նպատակով կկնքեն համապատասխան համաձայնագրեր:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը կնպաստեն մյուս երկրի լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և ուսուցմանը իրենց ուսումնական հաստատություններում, կաջակցեն մասնագետների, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի փոխանակմանը:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը կնպաստեն միմյանց համագործակցությանը՝ կրթությանն ու գիտությանը առնչվող միջազգային կազմակերպությունների գործունեության շրջանակներում:

Հոդված 9

Լիբանանում հայագիտության զարգացման նպատակով Կողմերը միջոցներ կձեռնարկեն Լիբանանի համալսարաններից մեկում հայագիտական ֆակուլտետի հիմնադրման համար և կնպաստեն նրա գործունեությանը:

Հոդված 10

Երկու երկրների ազգային օրենսդրությանը համապատասխան և փոխհամաձայնեցված պայմաններով Պայմանավորվող կողմերը իրենց երկրներում կոչուրացնեն, համապատասխանաբար, մյուս Կողմի կրթական և գիտական հաստատությունների մասնաձյուղերի կազմակերպումն ու գործունեությունը:

Հոդված 11

Կրթության և գիտության բնագավառներում երիտասարդության միջև կապերի սերտացման և ամրապնդման նպատակով Պայմանավորվող կողմերը կխրախուսեն երկու երկրների ուսանողական կազմակերպություն-ների և երիտասարդ գիտնականների միջև համագործակցությունը:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի իրականացման համար Պայմանավորվող կողմերը կմշակեն և կիրագործեն համապատասխան գործնական ծրագրեր: Սույն ծրագրերը կարող են լինել ամենամյա կամ ընդգրկել ավելի տևական ժամկետ: Ծրագրերը կկիրառվեն Պայմանավորվող կողմերի լիազոր անձանց կողմից ստորագրվելու պահից:

Հոդված 13

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել սույն Համաձայնագրում, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրությունները կհանդիսանան սույն Համաձայնագրի

անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Հոդված 14

Կողմերի միջև ծագած ցանկացած վեճ՝ կապված սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ, կլուծվի բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկու երկրների ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ճանապարհով միմյանց իրազեկ դարձնելու օրվանից և գործում է հինգ տարի ժամկետով:

Այն կարող է ինքնաբերաբար երկարաձգվել ևս հինգ տարով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի հայտնում այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում դրանով նախատեսված այն աշխատանքների իրականացմանը, որոնք սկսվել, բայց չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է Բեյրութ քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի օգոստոսի 6-ից:

